ՍԳՈ ԵՐԹ՝ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

1988 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կիրովաբադում՝ հինավուրց Գանձակում սումգայիթի կրկնության ահավոր փորձ արվեց ադրբեջանցի սանձարձակ խամաճիկների կողմից։ Տուժեցին հազարավոր անմեղ հայեր. թալանվեց նրանց ինչքը, հրկիզվեցին բնակարանները։ Վայրագ խուժանը տեղական իշխանությունների հանցավոր անտարբերությամբ ձեռնարկեց հայազգի մարդկանց շարդեր, սպանություններ։ Այդ օրհասական օրերին Գանձակի հայությունը բռունցքվեց, արժանապատվորեն դիմակայեց անօրեն խաժամուժին։ Մարդկանց համախմբելու, նրանց ինքնապաշտպանությունը կազմակերպելու դժվարին առաքելությունն իրենց վրա վերցրին տեղի հայկական եկեղեցին ու «Գանձակ» նախաձեռնող խումբը։ Ցավոք, այլևս հնարավոր չեղավ մնալ մուսավաթ թափթփուկների ապականած այդ քաղաքում և, հյուսիսային Արցախից դեպի Հայաստան ու Միության այլ վայրեր ձգվեցին հալածական հայերի քարավանները, որը շարունակվում են մինչև օրս։ Ներկայումս Կիրովաբադում 40—45 հազար հայերից մնացել են հատուկենտ ընտանիքներ։ Տասնամյակների փոշուց մաքրվեցին ու վերստին շրջանառության մեջ դրվեցին «գպղթական», «փախստական» արճճի պես ծանր, հոգեմաշ բառերը...

Երախտապարտ գանձակեցիների հիշողության մեջ ընդմիշտ կմնան նրանց անունները, ովքեր, բոլորովին անմեղ մարդիկ, ընկան նորօրյա ենիչերիների ձեռքով։ Արցախի գոտեմարտի այդ սուրբ նահատակների մահվան տարելիցի պատվին մայր Հայաստանում, Միծեռնակաբերդի ուխտավայրում կանգնեցվել է գանձակցիների միջոցներով կառուցված կոթող-խաչքար, որի բացմանն էին նվիրված անցած շաբաթ օրը Թատերական հրապարակում «Գանձակ» նախաձեռնող խմբի կազմակերպած միտինգն ու սգո երթը դեպի Միծեռնակաբերդ։ Միտինգում հանդես եկան «Գանձակ» նախաձեռնող խմբի ղեկավար Գրիշա Օգանեզովը, ՀՀՇ վարչության անդամներ Խաչիկ Ստամբոլցյանը, Լևոն ՏերՊետրոսյանը, նախկին կիրովաբադցիներ Ջուլիետա Վերդյանը, Սուրեն Հակոբյանը, Սերգեյ Երեմյանցը, Լյուդմիլա Աղաջանյանը և ուրիշներ։ Նրանք միահամուռ դատապարտեցին արցախահայության ազգային-ազատագրական պայքարը բռնությամբ ճնշելու մեր «ինտերնացիոնալիստ» հարևանների ծրագրված նենգությունը, պահանջեցին քաղաքական գնահատական տալ Կիրովաբադի անցյալ տարվա հանիրավի մոռացության տրված իրադարձություններին։

...Միծեռնակաբերդում, սումգայիթյան եղեռնագործության զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքարի կողքին, այսուհետև ամեն աշնան տերևները որպես արցունքներ կթափվեն այն կոթող-խաչքարի պատվանդանին, որը դարերին ու սերունդներին կպատմի Գանձակի անմեղ հայերի նկատմամբ կովկասյան թաթարների կատարած չարագործությունների մասին։

Սգո երթի մասնակիցները ծաղկեպսակներ դրեցին մեր հին ու նոր զոհերի հուշարձաններին։

Գևորգ ԼԱԼԱՑԱՆ